

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվար

2022թ.

25.02.2022

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՍՐ ՀՅՈՒՆԻՔՈՒՄ «ՄՄԱՐԹ» ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԿԲԱՑԻ

Աշխատանքային երկօրյա այցով Սյունիքում էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

Փոխմարզպետ Կարո Ավանեսյանի, մարզպետարանի Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մերի Գանդայանի հետ շրջայցեր են կատարվել Կապանի, Գորիսի ու Միսիանի տարածաշրջանի դպրոցներ: Փոխնախարարը ծանոթացել է կրթօջախների շենքային պայմաններին, ինչպես նաեւ քննարկվել են ուսումնական գործընթացի հետ կապված հարցեր:

Մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի հետ Ժաննա Անդրեասյանն այցելել է Կապանի թիվ 9 ավագ դպրոց, որը շենքային պայմանների բարելավման ու նորոգման կարիք ունի:

Փոխնախարարի հետ Սյունիք էին այցելել նաեւ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF), ԵՄ պատվիրակության, Եվրոպական ներդրումային բանկի ներկայացուցիչներն, ու այցի հիմնական նպատակն էր դիտարկել կրթական ենթակառուցվածքները եւ որոշել COAF SMART նոր կենտրոնների կառուցման հնարավոր վայրերը:

Մարզային ու համայնքային իշխանությունների հետ քննարկվել են այդ ուղղությամբ համագործակցության հնարավորությունները:

Նախատեսվում է Սյունիքում COAF-ի երկու «Սմարթ» կենտրոն հիմնել Կապան ու Միսիան համայնքների տարածքում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/317624513740253>

25.02.2022

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 23-ին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը մարզպետարանում հրավիրել էր խորհրդակցություն, որին մասնակցում էին մարզի համայնքների ղեկավարները, մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանը, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Խորհրդակցության օրակարգի առաջին կետում համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի քննարկումն էր, որին անդրադարձ կատարեց մարզպետարանի Զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ Հայկ Կարախանյանը: Նա ամփոփեց 2019-2021 թթ. արդյունքները՝ նշելով, որ մարզում կա 2020-ից չավարտված 8 սուբվենցիոն ծրագիր, 2021 թ.՝ 18 ծրագիր: 2022 թ. համար մարզի համայնքներից ստացվել է 32 սուբվենցիոն հայտ, որոնք կառավարության դիտարկումներից հետո ուղարկվել են համայնքապետարաններ՝ լրամշակման: Այս տարվա ծրագրերի նախահաշվային արժեքը 7.5 մլրդ դրամ է, որից համաֆինանսավորման կառավարության մասնաբաժինը՝ 4.7 մլրդ դրամ:

Խորհրդակցությանը համայնքների ղեկավարները մտահոգություններ ներկայացրեցին անբարեխիղճ կապալառուների կողմից ձգձգվող աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաեւ նշվեց, որ պետական համաֆինանսավորման մասնաբաժինը հատկացնելու ներկայիս կարգով նման կապալառուների պատճառով անավարտ են մնում նաեւ նույն ծրագրում ընդգրկված այլ բաղադրիչներ: Հետեւաբար, ֆինանսավորման կարգի փոփոխության հետ կապված առաջարկներ արվեցին՝ կառավարություն ներկայացնելու համար:

Հանդիպման ընթացքում մարզպետարանի Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մերի Գանդայանը ներկայացրեց կրթական բարեփոխումների շրջանակում իրականացվող «Կրթության որակի հասանելիության» ծրագիրը, որը պիլոտային է ու առաջինն իրականացվում է Կապանում: Դրա միջոցով գյուղական բնակավայրերում դպրոց-կենտրոններ կհիմնվեն, որոնց

վերաբերյալ մարզպետարանը տեղերում քննարկումներ է նախաձեռնել գյուղերի բնակիչների, դպրոցական անձնակազմերի ու ծնողների մասնակցությամբ:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների մասին զեկուցեց մարզպետարանի Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Էդիկ Բունիաթյանը: Քննարկվեցին հատկապես ռոտոման ջրի, սերմացուի, պարարտանյութի, վառելիքի հետ կապված խնդիրները, ինչպես նաև Մեղրիում սպանդանոցի բացակայության հարցը:

Համայնքներին՝ ՏԻՄ գործավարության ու փաստաթղթային աշխատանքի կազմակերպման հետ կապված նկատառումներ փոխանցեցին ՏԻՀԳՄՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանն ու Իրավաբանական բաժնի պետ Թամար Ստեփանյանը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին նաև առողջապահության, հողաշինության, քաղաքաշինության ոլորտներին առնչվող հարցեր:

Մարզպետը մի շարք հանձնարարականներ տվեց ու գրանցվեցին բարձրաձայնված խնդիրներն ու առաջարկները՝ համապատասխան վերադաս մարմիններին ներկայացնելու համար:

Փետրվարի 23-ի առավոտյան Մելիքսեթ Պողոսյանը խորհրդակցություն էր անցկացրել նաև մարզի համայնքների ղեկավարների, ուժային կառույցների մարզային ստորաբաժանումների, ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարներ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/316853810483990>

24.02.2022

1 ՄԼՐԴ 435 ՄԼՆ ԴՐԱՍ ԿՏՐՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՏԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ. ՄԻԱՅՆ ՔԱԶԱՐԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ 1,1 ՄԼՐԴ ԴՐԱՍ Է

Կառավարությունն իր այսօրվա՝ փետրվարի 23-ի նիստում որոշեց սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում գումար հատկացնել Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի եւ Սյունիքի մարզպետարաններին:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը՝ ներկայացնելով նախագիծը՝ նշեց, որ այս որոշմամբ 1 մլրդ 435 մլն դրամ կհատկացվի մարզպետարաններին՝ 13 համայնքներում շուրջ 15 սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար:

Արագածոտնի մարզպետարանին կհատկացվի 4 մլն դրամ, Արարատի մարզին՝ 42,2 մլն դրամ, Արմավիրի մարզին՝ 28 մլն դրամ, Գեղարքունիքին՝ 145 մլն, Լոռու մարզին, 38 մլն, Շիրակին՝ 23 մլն եւ Սյունիքին՝ 1 մլրդ 181 մլն դրամ:

Սանոսյանի խոսքով, Սյունիքին հատկացվող գումարը Քաջարանի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարելավման ծրագիրն է, որում ընդգրկված ենք աղաքի 25 շենքեր, որոնցից 3-ն ավարտական տեսքի է բերվել, 22-ում 60 տոկոս է ավելի աշխատանք է արվել. «Այս խոշոր ծրագրում կառավարությունն ունի 70 տոկոս մասնակցություն, 25 տոկոսը ՄԱԿ-ի զարգացման ծրագրերով է եւ միայն 5 տոկոսն է, որ համայնքը պետք է տրամադրի: Այդ 5 տոկոսի կեսը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն» է հատկացրել որպես հովանավոր: Ստացվում է, որ Քաջարանի 25 շենքերի նման ծավալի հսկայական ծրագրին համայնքն ունեցել է 2,5 տոկոս մասնակցություն», -ասաց նախարարը:

Անդրադառնալով Քաջարանում էներգաարդյունավետության բարելավման ծրագրին, վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասաց. «Սա չափազանց կարեւոր ծրագիր է, մենք օգնում ենք, որ քաղաքացին կոմունալ վարձերի գծով խնայողություն ունենա, դա իր սոցիալական վիճակի համար ավելի ծանրակշիռ ներդրում է»:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/1-mlrd-435-mln-dram-ktrvi-hamaynqayin-subventsion-tsragrerin-miayn-qajarani-tsragiry-11-mlrd-dram-e>

24.02.2022

ՇՈՒՌՆՈՒԽՈՒՄ 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՇՈՒՏՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԻ

Պատերազմի հետևանքով անօթևան մնացած շուռնուխցի ընտանիքների համար պետական աջակցությամբ նույն բնակավայրում կառուցվող 13 առանձնատնից 4-ը շուտով պատրաստ կլինեն: 170 ք. մ մակերեսով 5 սենյականոց տները նախատեսված են միջինը 5 անդամ ունեցող ընտանիքների համար: Կառավարության աջակցությամբ կառուցվող յուրաքանչյուր տան համար նախատեսված է մոտ 55 մլն դրամ: Արդեն մեկնարկել են ներքին հարդարման աշխատանքները: Տները շահագործման կհանձնեն ավարտուն տեսքով:

Մելիքսեթ Պողոսյան (Սյունիքի մարզպետ) - Արդեն 4-ի տանիքը դրել են ու հերթով դրվում է շատ որակյալ աշխատանք է: Ոչ մի խնդրի չկա:

Նոր թաղամասում առանձնատների կողքին կլինի առևտրի սրահ, մանկապարտեզ, ստորգետնյա խաղասրահ և սքեյթի հարթակ: Թաղամասի շինաշխատանքներին հետևում է Սյունիքի մարզպետը: Գոհ է կառուցապատման ընթացքից, ասում է՝ կարևոր է, որ անտուն մնացած շուռնուխցին զգա՝ պետությունն իր կողքին է: Շինարարները դուռ-պատուհան արդեն դրել են, գաջապատման աշխատանքներն են ընթանում:

Վարդան Վարդանյան (շինարար) - Ով էս տանը ապրի, թող 15 հատ երեխա ունենա, ինչ կորցրել ենք, թող վերականգնվի: Շուռնուխը բարգավաճի, երեխեքը շատանան, ով որ տուն է կորցրել, գան ապրեն:

Շուռնուխում կառուցվող նոր թաղամասը կլինի Սյունիքի ճարտարապետական ավանդական սկզբունքներով՝ կարմիր տանիքներով և պատերի բալենի շարվածքով: Գյուղատնտեսությունն ու անասնապահությունը խթանելու համար կառուցվելու են նաև խելացի անասնագոմ, սպանդանոց, սառնարանային տնտեսություն և պահեստներ:

Աղբյուրը՝ <https://bit.ly/35lcSN6>

23.02.2022

ԳՈՐԻՍ-ԿԱՊԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՓԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԵՆ ԱՃԵԼ, ՔԱՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԷՐ

Գորիս-Կապան ճանապարհի փակ լինելու պայմաններում Հայաստան-Իրան առևտրաշրջանառության ծավալներն ավելի քիչ են աճել, քան նախատեսված էր 2021 թվականի համար: Այս մասին կառավարության նիստից հետո լրագրողներին ասաց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

«Իհարկե, այդ ճանապարհի անմատչելիությունը հանգեցրել է նաև երկու երկրների միջև առևտրի կրճատմանը, բայց ոչ թե կրճատվել է 2020-ի նկատմամբ, որովհետև 2020-ի համամետ 2021-ին ունեցել ենք Իրանի հետ առևտրաշրջանառության 25 տոկոսանոց աճ և հասել ենք 500 մլն դոլարի սահմանաչափին: Բայց, այնուամենայնիվ, տարվա ընթացքում, մինչև ճանապարհի փակվելը առևտրի աճի ցուցանիշն այնպիսին էր, որ մենք հույս ունեինք անհամեմատ ավելի բարձր աճի սպասում, որը չեղավ, որովհետև ճանապարհի խնդիրն առաջացավ», - ասաց նա: Ըստ Քերոբյանի՝ կառավարությունը Սյունիքի մարզում տարբեր ճանապարհաշինական նախագծեր է իրականացնում, որը կմեղմի խնդիրները:

Աղբյուրը՝ <https://www.lragir.am/2022/02/23/700290/>

22.02.2022

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎԻ ՔԱԶԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՍՏԱՑԵԼ Է ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի նախագահությամբ տեղի է ունեցել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Քաջարան-Ազարակ ճանապարհահատվածի նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի նիստը: ՀՀ քաղաքաշինության կոմիտեն տեղեկացնում է, որ քննարկվել է Տրանշ-4-ի Քաջարան-Ազարակ 32կմ ընդհանուր երկարությամբ հատվածի վերակառուցման նախագիծը: Վերակառուցման աշխատանքները ֆինանսավորվում են Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի վարկային, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Վերակառուցվող 32կմ երկարությամբ ճանապարհահատվածը լինելու է 2-րդ տեխնիկական կարգի՝ 80կմ/ժ հաշվարկային արագությամբ: Ճանապարհահատվածը ներառելու է 18 կամուրջ և 3 թունել, որոնցից ամենաերկարը լինելու է 7.5կմ: Ծանրաքաշ մեքենաները կունենան իրենց առանձին երթևեկելի գոտին, ինչն առավել դյուրին կդարձնի բեռնափոխադրումները:

Հանձնաժողովի անդամները ներկայացրել են նախագծի վերաբերյալ իրենց դիտարկումները: Առանձնահատուկ շեշտադրվել են նաև ամբողջ ճանապարհահատվածի և ինժեներական բոլոր կառույցների սեյսմակայուն շինարարական նորմերի պահանջներին համապատասխանության խնդիրները:

Վերջում քվեարկության միջոցով պետական համալիր փորձաքննական հանձնաժողովը Տրանշ-4-ի Քաջարան-Ազարակ 32կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման նախագծին տվեց միաձայն դրական եզրակացություն, որի արդյունքում կարող է կազմակերպվել նշված ճանապարհահատվածի շինաշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացը:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1076184.html>

22.02.2022

ՇՈՒՇԻԻ ԽԱՅՏԱՌԱՎ ԿՈՉԱԿԱԳԻՐԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԸ...

Սյունեցիներին հետաքրքրող այդ հարցի շուրջ փետրվարի 21-ին գրուցել են Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանն ու «Սյունյաց Երկրի» խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

Դավիթ Բաբայանը ծնվել է 1973թ. Ստեփանակերտում:

Բարձրագույն կրթություն է ստացել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Հայաստանի ամերիկյան համալսարանում և Կենտրոնական եվրոպական համալսարանում:

Պատմական գիտությունների դոկտոր է:

Արցախի պահպանողական կուսակցության նախագահն է:

2007-20թթ. ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետն էր:

2020թ. մայիսի 26-ից Արցախի Հանրապետության նախագահի արտաքին հարցերով խորհրդականն էր:

2021-ի հունվարի 4-ից Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարն է:

-Պարոն Բաբայան, նախ՝ շնորհակալություն մեր պարբերականին հարցազրույց տալու պատրաստակամության համար:

Ուզում ենք Ձեր օգնությամբ լույս սփռել Ադրբեջանի և Թուրքիայի նախագահների կողմից 2021թ. հունիսի 15-ին ստորագրված Շուշիի համագործակցության պայմանագրի վրա:

Սկսենք մի մանրուքից, եթե, իհարկե, դա այդպես կարելի է անվանել՝ կա՞ հոչակագրի հայերեն պաշտոնական թարգմանությունը. ռուսերեն և ադրբեջաներեն տարբերակները տարածված են ...

-Ինքս էլ շնորհակալ եմ, որ մենք այսպիսի կապի մեջ ենք, կարծում եմ՝ շատ կարևոր է մեր կապը սերտ պահելը՝ Արցախի և Սյունիքի տարբեր ոլորտների միջև: Ի վերջո Արցախն ու Սյունիքը հայոց պետականության հիմքն են:

Շուշիի հռչակագրի հայերեն տարբերակը, կարծում եմ, կարող էր լինել, բայց քանի որ կան ռուսերեն և անգլերեն տարբերակները, աղբբեջաններն մի կողմ դնենք, կարելի է դրանով բավարարվել, չնայած պետք է նաև թարգմանվի հայերեն...

-Ինչո՞վ էր պայմանավորված ռազմաքաղաքական համագործակցության նոր փաստաթղթի ստորագրումը Թուրքիայի և Ադրբեջանի միջև, չե՞ որ, առանց այդ էլ, նրանց համագործակցությունը պատշաճ մակարդակի վրա էր:

-Այո, նրանց համագործակցությունը շատ բարձր մակարդակի վրա է, բայց շատ կարևոր էր, որ համագործակցությունը նոր ձևով ֆիքսվեր ու արձանագրվեր հենց Շուշիում: Դա ոչ թե պատահականություն էր, այլ հատուկ՝ այսպես ասած ուղերձ աշխարհին, ուղերձ Ադրբեջանին, Թուրքիային և ինչ-որ տեղ՝ թուրքական աշխարհին: Որովհետև այդ պայմանագիրն իր մեջ, փաստորեն, ամրագրում է նոր իրականությունը: Ասել է թե՛ Ադրբեջանը և Թուրքիան այլևս հանդես են գալիս որպես մեկ աշխարհաքաղաքական սուբյեկտ, ու այդ սուբյեկտի միասնական աշխարհաքաղաքական հայեցակարգը, ծավալապաշտական ձգտումները նույնպես պարզ են... Եվ այն, որ համաձայնագիրը ստորագրվեց Շուշիում՝ նաև ցույց է տալիս, թե ինչպիսի կարևորություն են նրանք հատկացնում ադրբեջանադարաքաղաքական հակամարտության կարգավորմանը, քանի որ՝ եթե այդ հակամարտությունը կարգավորվի հոգուտ Ադրբեջանի և Թուրքիայի, ապա դա կբերի այնպիսի մեծ հաղթանակի իրենց համար և այնպիսի հնարավորություններ կստեղծի, որ դրանից հետո ծավալապաշտական ծրագրերը շատ ավելի հեշտ կլինեն կյանքի կոչել, ինչը մեծ վտանգ կներկայացնի հայոց պետականության համար: Ադրբեջանադարաքաղաքական հակամարտության համար ցանկալի լուծումը (նրանց համար) այն է, որ Արցախը վերանա... Դա կբերի հայոց պետականության ապամոնոստաժմանը և կործանմանը, դա կբերի հսկայական տրանսֆորմացիաների, աշխարհաքաղաքական լանդշաֆտի փոփոխության Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում, այսինքն՝ կհանգեցնի մի նոր պայթյունավտանգ իրավիճակի ձևավորման:

-Հիմա՝ Շուշիի հռչակագրի բովանդակությունը՝ համառոտ

-Այդ փաստաթուղթն իրենից ներկայացնում է հետևյալը՝ Թուրքիան և Ադրբեջանն արդեն հանդես են գալիս որպես մեկ միասնական աշխարհաքաղաքական միավորում, իրենց արտաքին և ռազմական քաղաքականությունը դարձնում են ընդհանուր: Նշում են, որ իրենց համար շատ կարևոր է, որ միավորեն նաև թուրքական այլ երկրներ, ինչն աշխարհաքաղաքական հայտ է: Դա է ամենակարևորը...

-Հռչակագրում անթաքույց են հավակնությունները Սյունիքի հանդեպ...

- Այսպես կոչված Զանգեզուրի միջանցքի դրույթը նույնպես տեղ է գտել Շուշիի հռչակագրում, ու դա ևս մեկ անգամ ցույց է տալիս՝ ինչպիսի կարևորություն են նրանք տալիս Արցախին և Սյունիքին: Որովհետև այս երկու տարածքը յուրացնելով կամ գրավելով, բնական է, վերջ կտրվի հայոց պետականությանը, և տարածաշրջանում արմատապես կփոխվի ռազմաքաղաքական հավասարակշռվածությունը: Եվ ուրեմն, հաշվի առնելով այսպես կոչված Զանգեզուրյան միջանցք հասկացության բուն էությունը, հռչակագիրն անմիջական վտանգ է առաջացնում Սյունիքի նկատմամբ, ինչին պետք է շատ լուրջ վերաբերվենք ու ըստ արժանվույն հակադարձենք:

-Հռչակագրի ստորագրումից հետո Ադրբեջանի և Թուրքիայի նախագահները հանդես եկան հայտարարություններով, Էրդոհանն էլ ելույթ ունեցավ Ադրբեջանի խորհրդարանում՝ ներկայացնելով Շուշիի հռչակագրի նշանակությունը:

Արդյո՞ք հավելումներ արվեցին արդեն իսկ ստորագրված փաստաթղթին, թե՞ ...

- Ուրեմն տեսե՛ք՝ այդ հայտարարությունները, խորհրդարանների կողմից փաստաթղթին հավանություն տալը՝ զուտ արարողակարգային բնույթ են կրում, բայց դրանով ևս մեկ անգամ վերհաստատվում է հոչակագրի կարևորությունը: Ուստի և՛ տեղի ունեցածը փաստորեն նման է, ասենք, այն վիճակին, երբ դաշինքներ էին ստեղծվում Երկրորդ աշխարհամարտից առաջ, Առաջին աշխարհամարտից առաջ: Այնպես որ՝ հոչակագիրն ունի տարածաշրջանային և գլոբալ նշանակություն:

-ՀՀ դիրքորոշումը Շուշիի հոչակագրի վերաբերյալ:

Մենք տեղյակ ենք միայն ՀՀ արտգործնախարարության 2021թ. հունիսի 17-ի մեկնաբանությանը:

- Կարծում եմ՝ ճիշտ կլիներ Երևանի պաշտոնական դիրքորոշումը հենց իրենցից ճշտելիք, դա ավելի ողջամիտ կլիներ:

-Արցախի Հանրապետության պաշտոնական դիրքորոշման մասին...

-Մենք այդ քայլը համարում ենք շատ վտանգավոր, համարում ենք ապակառուցողական և այդ մասին բազմիցս հայտարարել ենք:

-Շուշիի հոչակագրի վերաբերյալ կա՞ն ուրիշ երկրների արձագանքներ, ասենք՝ Ռուսաստանի Դաշնության արձագանքը, որ մեզ հետաքրքրում է նախևառաջ:

-Գիտե՛ք՝ գերտերություններն ունեն աշխարհաքաղաքական պայքարի իրենց դպրոցը, իրենց ոճը և փորձը: Կա չգրված օրենք. չեմ կարծում, թե այդ հոչակագիրը և դրանում ամրագրված նպատակներն անտեսվել են որևէ մեկի կողմից, մանավանդ որ կան երկրներ, որոնց շահերին նույնպես դա առնչվում է, որոնց անվտանգությանը սպառնալիք է ներկայացնում Շուշիի հոչակագիրը: Բայց դա չի նշանակում, թե իրենք պետք է անպայման հրապարակային արտահայտվեն: Ամենակարևորը՝ համարժեք քայլեր պետք է ձեռնարկեն, որպեսզի այդ վտանգներին կարողանան դիմակայել...

-ԱԺ հանձնաժողովը բացասական եզրակացություն տվեց Շուշիի խայտառակ հոչակագիրը դատապարտելու նախագծին...

Ձեր կարծիքով՝ ի՞նչ կտան ՀՀ ԱԺ-ում այդ փաստաթղթի քննարկումն ու դատապարտումը:

-Ընդհանրապես նման հարցերի, նման փաստաթղթերի, նման աշխարհաքաղաքական հայտերի քննարկումը շատ կարևոր է և՛ քաղաքական, և՛ գիտավերլուծական շրջանակների կողմից, բայց առավել կարևոր է իսկապես պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերելը: Դրա համար մենք միշտ շեշտում ենք՝ արտաքին քաղաքականության մեջ պետք է շատ մեծ դերակատարություն ունենա գիտական ու պրոֆեսիոնալ ներուժը: Որովհետև բազում մարդիկ կան, ովքեր իրենց քաղաքագետի տեղ են դնում... Պետք է փոխենք այդ ոճը, և արտաքին քաղաքական, ռազմաքաղաքական, աշխարհաքաղաքական զարգացումները քննարկենք, դիտարկենք գիտական ներուժի և պրոֆեսիոնալների ներգրավմամբ...

-Եվ, այդ բոլորով հանդերձ, ի՞նչ անել, չե՞ որ խոսքն Արցախի և Սյունիքի դեմ ռազմաքաղաքական նոր նկրտումների մասին է:

-Պետք է իրականությունից չկտրվենք, պետք է հասկանանք՝ ինչ գործընթացներ են ընթանում ու պետք է ճիշտ աշխարհաքաղաքականություն վարենք, այլ տարբերակ չունենք: Եվ հասկանանք, որ այսպիսի բարդություններ մենք միայնակ ի վիճակի չենք հաղթահարել: Մենք պետք է գիտակցենք՝ այդ մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է եղբայրական-բարեկամական երկրների հետ կապերը խորացնել, տարբեր խաղացողների հետ ընդհանուր շահեր փնտրել, և միայն ճիշտ աշխարհաքաղաքականության միջոցով հնարավոր կլինի կասեցնել այդ վեկտորները: Այնպես չէ, որ հնարավոր չէ, բայց դա կախված է մեր աշխատանքից, մեր բարոյահոգեբանական և պրոֆեսիոնալ մակարդակից:

-Վերջին հարցը, որ անուղղակի է առնչվում մեր գրույցի թեմային. Ձեր գնահատականն Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի վերաբերյալ Ադրբեջանի դատախազության ձեռնարկած քայլերին:

-Ոչ այլ ինչ է, քան ահաբեկչական հայտ: Արցախի Հանրապետության նախագահին փաստորեն առևանգելու, նրա դեմ մահափորձ կատարելու, ինչու չէ, տարբեր ամենավատ բաներ կատարելուն միտված քայլ է: Անձերի խնդիրը չէ այս պարագայում, դա ոտնձգություն է Արցախի պետականության հանդեպ, քանզի նախագահի ինստիտուտը պետական ինստիտուտներից մեկն է: Միննույն ժամանակ՝ դա ահաբեկչություն է Արցախի քաղաքացու նկատմամբ, որովհետև նախագահը նույնպես Արցախի Հանրապետության քաղաքացի է: Այսինքն՝ և՛ պետականությանը, և՛ ժողովրդին է փորձում հարվածել Ադրբեյջանը: Հետևաբար՝ դրան պետք է զգույշ, լուրջ վերաբերվենք, և ամեն հարթակում ու աստիճանում բարձրաձայնենք այդ մասին, որովհետև դա, կրկնում եմ, պետական ահաբեկչություն է ու վտանգ է ներկայացնում ոչ միայն մեզ, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհին...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/shushii-khaytarak-hrchakagiry-ev-syuniqy>

21.02.2022

ՄԻՄԻԱՆ - ՔԱԶԱՐԱՆ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՊԱՀԱՆՁՎԻ 6 ՏԱՐԻ ԵՎ ՄԻՆՉԵՎ 1 ՄԼՐԴ ԴՈԼԱՐ

Այս շաբաթ վարչապետը հայտարարեց Հայկական խաչմերուկի ստեղծման գաղափարի մասին՝ պարզաբանելով, որ Հյուսիս-հարավ կառուցվող տարածաշրջանային կարևորության ճանապարհին ավելանալու է նորը՝ Արևելք-արևմուտքը: Այն պետք է զարգանա դեպի Ադրբեյջան, հետագայում՝ դեպի Նախիջևան և Թուրքիա: Արևելք-արևմուտքի նախագիծը դեռ քաղաքական պայմանավորվածություններ ձեռք բերելու փուլում է, վարչապետի համոզմամբ, սակայն, ճանապարհը շատ արագ իրականություն կդառնա:

Դրան զուգահեռ՝ Հյուսիս-հարավը հասել է ամենաբարդ հատվածին: Լեռնոտ հարավում արագընթաց ճանապարհ ունենալու համար կամուրջներ ու թունելներ են հարկավոր:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3HGN3Uu>

17.02.2022

ԱԹՍ ԿՐԹԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԳՈՐԻՍՈՒՄ

Բացվել է նոր «Արմաթն օդում» [#ԱԹՍ](https://www.facebook.com/ArmathEngineeringLaboratories/) կրթական լաբորատորիա՝ այս անգամ Գորիսում:

Պաշտոնական բացման արարողությանը ներկա էին ԱՏՁՄ գործադիր տնօրեն Հայկ Չոբանյանը, Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, համայնքապետարանի ներկայացուցիչներ և [#Արմաթ](https://www.facebook.com/ArmathEngineeringLaboratories/) համայնքի անդամներ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/ArmathEngineeringLaboratories/posts/3081626922154618>

17.02.2022

ՁՄԵՈՐ ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ՝ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ, ԻՀԱՐԿԵ, ԿԱՌՈՒՑՎՈՂ ԱՅԼՈՒՏՐԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ...

2020 թ. նոյեմբերի 9-ից եւ հատկապես դեկտեմբերի 18-ից հետո Սյունիքի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում հաղորդակցության ուղիներին առնչվող հարցերը դարձան ամենամտահոգիչն ու խնդրահարույցը:

Իրավիճակն ավելի սրվեց 2021-ի ամռանը, երբ մի քանի օրով (Կարմրաքարի մերձակայքում) ադրբեյջանական զինուժը շրջափակեց Գորիս-Կապան մայրուղին: Ավելի ուշ՝ անցած նոյեմբերին, ադրբեյջանական անցակետեր կարգվեցին Գորիս-Կապան եւ Կապան-Ճակատեն ճանապարհներին: Այդ ամենից հետո է, որ հրամայական դարձավ շրջանցող կամ այլընտրանքային ճանապարհների կառուցումը: Թե ինչ ընթացքի մեջ են դրանց շինարարությունը, փորձեցինք պարզել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պատասխանատուներից: Մինչ այդ, սակայն, կարելուրեցինք

սյունիքյան ճանապարհների ձևեռային պահպանության հարցերը, քանզի եղանակներն արդեն իսկ անակնկալներ են մատուցել:

Մեզ հետաքրքրող այդ հարցերի շուրջ է գրույցը «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պատասխանատուների հետ:

Ձևեռային պահպանություն

– Հիմա ձևեռվա «ամենաթեժ» պահն է, եւ ռելիեֆային դժվարություններով անմրցելի Սյունիքում մտահոգող հարցերից է ճանապարհների ձևեռային պահպանությունը:

Անկեղծորեն՝ այն, ինչ հունվարին (ձնաբքի օրերին) արվեց ու արվում է Դիբազի լեռնանցքում կամ Եռաբլրի սարահարթում՝ իսկական հերոսություն է... Այո, Սյունիքի ճանապարհաշինարարները (մեծամասամբ) իրենց կոչման բարձրության վրա են:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ընթացիկ տարում (հունվար ամսվա արդյունքներով) մարզի տարածքով անցնող միջալետական եւ հանրապետական ճանապարհների ձևեռային պահպանությունը դժվարություններով է ընթանում:

Ամենամեծ մտահոգությունը, իհարկե, կապված է Մ2-ի մի հատվածի հետ՝ Մոզի գյուղ-Հարժիսի խաչմերուկ. ամեն ձյունից հետո այնտեղ սաստիկ ձնաբուք էւ ձնամրրիկ է: Եվ ոչ միայն ձնազանգվածն է խոչընդոտում, այլ տեսանելիության գրեթե լիակատար բացակայությունը:

Տարեսկզբին արդեն իսկ երկու-երեք անգամ բախվել ենք նման իրողության:

Արդյունքում ունենում ենք ժամերով, երբեմն օրերով փակ մայրուղի, որից (ի դեպ) օգտվում են նաեւ Արցախի Հանրապետություն, Կապան, Մեղրի, Իրան եկող-գնացող մեքենաները:

Ի՞նչ ծրագրեր ունեք այդ ճանապարհահատվածի հետ կապված:

Խորհրդային տարիներին, օրինակ, որքանով հիշում ենք, այդ հատվածում՝ մի քանի կիլոմետրի վրա՝ ճանապարհին գուգահեռ, փայտյա ցանկապատեր էին տեղադրում՝ իբրեւ յուրօրինակ կանխարգելիչ միջոց:

- Սյունիքի մարզն ունի բարդ ռելիեֆ: Այսօր բոլորի ուշադրությունը Սյունիքի ճանապարհների վրա է, քանի որ Իրանի Իսլամական Հանրապետության և Արցախի Հանրապետության հետ կապն ապահովվում է հենց Սյունիքի մարզի ճանապարհներով: Հարժիսի տեղամասում խորհրդային տարիներին տեղադրված փայտե ցանկապատերը տարիների ընթացքում անհետացել են: Այսօր նույնպես խնդիրներ ունենք ճանապարհային կահավորանքի անհետացման հետ կապված: Յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտակցի, որ ճանապարհային կահավորանքը երթևեկության անվտանգության տարրերից է, և չպետք է թույլ տանք, որպեսզի դրանք վնասվեն կամ անհետանան: Նշենք նաև, որ ավտոճանապարհների ընթացիկ պահպանման աշխատանքներ կատարող կազմակերպությունները մշտապես իրականացնում են ավտոճանապարհային կահավորանքի թարմացման աշխատանքներ: Կապալառու կազմակերպությունները ՀՀ միջալետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականացնում են շուրջօրյա հսկողություն և հերթապահություն: Համագործակցելով ճանապարհային ոստիկանության հետ՝ արվում է հնարավորը՝ եղանակային վատ պայմաններում երթևեկելի ճանապարհներ ունենալու համար: Եթե նույնիսկ առաջանում են խնդիրներ, դրանք արագ լուծվում են:

- Հունվարյան ձնաբքերի ու ցրտերի ժամանակ քանիցս դժվարանցանելի կամ անանցանելի է դարձել Սատանի կամրջից Տաթև բարձրացող՝ խիստ թեք ճանապարհը: Եվ խոշոր բեռնատարներն ու կցորդով մեքենաները ժամերով հավաքվում էին Սատանի կամրջում կամ (Կապանից եկողները) Տաթև գյուղի մերձակայքում:

Ընդ որում՝ այդ հատվածում ոչ թե ձնաբուքն է դժվարություններ հարուցում, այլ սառույցը: Կարծեք դա ավելի դյուրին լուծելի խնդիր պիտի լիներ, բայց...

- Մ2 -Տաթև-Աղվանի-Մ2 միջալետական նշանակության ավտոճանապարհի 18-րդ կմ (Սատանի կամուրջ) հատվածում կցորդով մեքենաների կուտակման հարցը փորձել ենք լուծել: Ձյան տեղումների

և ցածր ջերմաստիճանի (մերկասառույցների) ժամանակ գիշերային ժամերին ռելիեֆի բարդության, տեսանելիության բացակայության պատճառով այդ հատվածը ժամանակ առ ժամանակ դառնում է դժվարանցանելի, սպասարկող ճանապարհաշինական կազմակերպության և ճանապարհային ուստիկանության համատեղ ջանքերով կազմակերպվում է նշված հատվածի երթևեկությունը. թույլ չի տրվում կցորդով մեքենաներին գիշերվա ժամերին անցնել Տաթևի ոլորանները, միաժամանակ ձմեռային պահպանումն իրականացնող կազմակերպությունների կողմից ամբողջ գիշերվա ընթացքում պարբերաբար կատարվում են մաքրման և մշակման աշխատանքներ, և երթևեկությունը կցորդով տրանսպորտային միջոցների համար վերականգնվում է առավոտյան:

- Մ2-Տաթև-Կապան հիմնանորոգված ճանապարհի խնդրահարույց տեղամասերից մեկը (հատկապես ձմռանը) Տաթևի արևելյան մուտքն է:

Մոտ 100 մ երկարությամբ հատվածն անցնում է սողանքային՝ գրունտային տեղանքով:

Ամենաթեթև տեղումներից անգամ՝ ներքեից (Սատանի կամրջից) բարձրացող խոշոր բեռնատարների եւ կցորդով մեքենաների համար ճանապարհի այդ հատվածը դառնում է անանցանելի: Նման իրավիճակներում խնդիրն ամեն անգամ (ժամանակավորապես) լուծվում է ավազակոպիճ տեղադրելով:

Արդյո՞ք ընթացիկ տարում կլուծվի ճանապարհային այդ հանգույցի խնդիրը:

-Նշված 100մ երկարությամբ սողանքային հատվածը նախատեսված է հիմնանորոգել 2022 թվականին: Ձմեռային պահպանման շրջանակներում այդ հատվածում կապալառու կազմակերպության կողմից պարբերաբար կատարվում են երթևեկելի մասի խճապատման աշխատանքներ:

-Ձմեռային պահպանության հետ կապված հաջորդ հիմնախնդիրն առնչվում ենք դարձյալ Մ2-ի վրա՝ Շաքեի խաչմերուկից մինչև Զանգեր...

Ունե՞ք ծրագիր այդ հատվածի հետ կապված:

- Հայաստանը լեռնային երկիր է, և ջերմաստիճանային տատանումները կտրուկ են, ուստի սպասարկման առումով առաջանում են որոշ խնդիրներ: Ոչ միայն նշված, այլև շատ այլ հատվածներում ջերմաստիճանը կարող է հասնել մինչև -20-ի, իսկ այդ պայմաններում երթևեկելի մասի ադ-ավազի խառնուրդով մշակումն արդյունք չի տալիս: Սակայն ձմեռային պահպանումն իրականացնող կազմակերպությունների կողմից արվում է հնարավորը՝ ձյան շերտը մաքրելու և սառույցը հալեցնելու, ավտոճանապարհի անցանելիությունն ապահովելու համար:

-Եվ որպեսզի ձմեռային պահպանության հետ կապված ամեն ինչ պարզ լինի՝ կարո՞ղ ենք իմանալ՝ բավարար համարո՞ւմ եք ճանապարհների ձմեռային պահպանության ֆինանսավորումը եւ այդ գործով զբաղվող ընկերությունների տեխնիկական ապահովվածությունը (նկատի ունենք նախևառաջ ձյունամաքիչ մեքենաները):

- Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման համար հայտարարված վերջին մրցույթի արդյունքում 30 տոկոսով ավելացվել են ձմեռային պահպանման նպատակով հատկացվող գումարները: Ի դեպ, նշենք, որ վերջին անգամ ավտոճանապարհների սպասարկման համար գնային վերանայում արվել էր 2010 թվականին: 2021 թվականին ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N 1419 որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել, ըստ որոնց՝ մեքենասարքավորումների հետ կապված նոր պայմաններ են սահմանվել կապալառու կազմակերպությունների համար:

Այլընտրանքային ճանապարհներ

- Հետպատերազմյան շրջանի պոնիքյան գլխավոր հոգսերից մեկը, որ համապետական ու ռազմավարական նշանակություն ունի, ճանապարհային կանոնավոր հաղորդակցության ապահովումն է:

Բհարկե, մենք տեսնում ենք, թե ինչպիսի մեծամասշտաբ աշխատանքներ են կատարվում այդ ուղղությամբ:

Որոշ հարցեր, այդուհանդերձ, պարզաբանման կարիք ունեն:

Եվ ուրեմն՝ բացի Որոտան գյուղի մերձակայքից, ուրիշ հատվածներ ունեն՞ք Գորիս-Կապան մայրուղու վրա, որոնք անցնում են առայժմ Ադրբեջանին վերագրվող տարածքներով:

Ու, եթե կարելի է, նշեք խնդրեմ այդ ճանապարհահատվածները՝ անուններով, որպեսզի մեզ հասկանալի լինի:

- Հարցի պատասխանին մենք չենք տիրապետում, ասել է թե՛ հարցը պետք է ուղղել պետական այլ մարմինների:

- Տաթև-Կապան ճանապարհի մասին...

Բհարկե, այն գործում է, եւ հույս ունենք, որ ընթացիկ տարում կիսատ մնացած գործերն ավարտին կհասցվեն:

Միեւնույն ժամանակ՝ շարունակում է անհերքելի մնալ կարծիքը՝ քանի դեռ այդ ճանապարհը չի շրջանցում Վերին Խոտանան գյուղը, դժվար թե այն լիարժեք գործի:

Ըստ ՀՀ վարչապետի հայտարարության՝ նախատեսվում է 2022-ին կառուցել այդ գյուղը շրջանցող ճանապարհահատված:

Ի՞նչ ընթացքի մեջ է տվյալ մտադրության իրականացումը:

- Հաշվի առնելով, որ Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 ճանապարհի առանձին տեղամասերում կառուցվել է նոր հողային պաստառ, հետագա թերություններից խուսափելու նպատակով որոշում է կայացվել ասֆալտբետոնե վերին շերտը տեղադրել 2022 թվականին: Նշենք նաև, որ Տաթև-Աղվանի ճանապարհի հիմնանորոգման արդյունքում ճանապարհի երթևեկության ինտենսիվությունը կտրուկ աճել է, ինչի հետևանքով Վերին Խոտանան գյուղի տարածքով անցնող հատվածում հատկապես ձմեռային ժամանակահատվածում առաջացել են անվտանգ և անխափան շահագործման խնդիրներ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ հրատապ խնդիր է առաջացել Վերին Խոտանան գյուղը շրջանցող և անհրաժեշտ տեխնիկական պայմանները բավարարող նոր ավտոճանապարհի կառուցումը 2022 թվականին:

- Ի՞նչ կստեք Կապանն Ագարակ, Եղվարդ, Ուժանիս գյուղերին կապող այլընտրանքային ճանապարհի մասին:

Ադրբեջանը 2020-ի դեկտեմբերի 18-ից անմիջապես հետո փակեց Կապանը տվյալ ենթաշրջանին կապող (ադրբեջանական երբեմնի Սեիդլար գյուղով)՝ մեր իսկ կողմից ժամանակին բարեկարգված ճանապարհը:

Եվ երբեմնի կարճ ճանապարհի փոխարեն այդ ենթաշրջանի հետ կապը ներկայումս ապահովվում է Վերին Գյոդաքլու ու Խղրանց գյուղերի խիստ անմխիթար ճանապարհով:

Որքանով տեղյակ ենք՝ այդ ուղղությամբ հողային աշխատանքների մեկնարկը տրված է...

- Կապանն Ագարակ, Եղվարդ, Ուժանիս գյուղերին կապող այլընտրանքային ճանապարհի շինարարության աշխատանքները կավարտվեն 2022 թվականին: Այս տարի կավարտվի նաև S-8-22 /Մ2/-Վարդավանք-Խղրանց-Ագարակ ավտոճանապարհի մոտ 13 կմ հատվածի հիմնանորոգումը:

- Խոտ-Մ2 վերաշինվող ճանապարհի մասին...

Ե՞րբ կունենանք այդ ճանապարհը՝ վերջնական տեսքով, եւ արդյո՞ք այն շահագործելուց հետո կկարողանանք Մ2-ով Գորիսից անվտանգ հասնել Կապան:

- Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցումն ընթացքի մեջ է: Նախատեսվում է շինաշխատանքներն ավարտին հասցնել 2022 թվականին:

- Քաշունիի խաչմերուկ-Բարձրավան ճանապարհի կառուցման ընթացքի մասին նույնպես կուզենայինք իմանալ:

- Հ-46 (Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան ավտոճանապարհը նույնպես կառուցման ընթացքում է:

- **Տանձավեր-Շուռնուխ** այլընտրանքային ճանապարհի մասին. կարծեք այնքան էլ բարեհարմար երթուղի չի ընտրվել: Իմիջիայլոց, այդ ճանապարհը պիտի անցնի երբեմնի Մաճ գյուղի ավերակներով եւ, ակնկալում ենք՝ հնավայրը չի տուժի դրանից:

- Տանձավեր-Շուռնուխ ավտոճանապարհի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: Դրանց ավարտը նախատեսված է 2022 թվականին: Նշված հնավայրը շինաշխատանքների հետևանքով չի տուժի:

- **Գեղանուշ-Ճակատեն ճանապարհի մասին.** կարո՞ղ ենք համարել, որ դա Կապանը Ճակատենին կապող ժամանակավոր լուծում է, եւ այնտեղ կբավարարվենք գրունտային վիճակով: Իսկ Կապան-Ճակատեն ավանդական մայրուղու հիմնական այլընտրանքը կլինի կառուցվող ճանապարհը: Կարո՞ղ եք վերջնաժամկետ նշել այդ ճանապարհի կառուցման մասով:

- Գեղանուշ-Ճակատեն ճանապարհը ժամանակավոր լուծում է, իսկ հիմնական՝ Մ-17, (Մ-2) (Կապան)-Օավ-Մ2 ավտոճանապարհի Կապան-Ճակատեն շրջանցիկ ճանապարհի կառուցումը սկսված է:

- **Լծեն-Տաթեւ** այլընտրանքային ճանապարհի կառուցումը համեմատաբար ուշ սկսվեց, հողային աշխատանքներն էլ դեռ առջեւում են...

Կարո՞ղ ենք ենթադրել, որ այդ ճանապարհի կառուցումը ընթացիկ տարում ավարտին կհասցվի, եւ մեքենաները Մ2-ից Լծեն կհասնեն ոչ թե Միսիան քաղաքով, այլ Նորավան գյուղով, որի ճանապարհը (Մ2-ից իջնող) հիմնանորոգվել է 2021-ին:

- Տ-8-93, Լծեն-Տաթեւ ավտոճանապարհի վերակառուցումը սկսվել է նախորդ տարի: Նախատեսվում է աշխատանքներն ավարտին հասցնել 2022 թվականին: Այո, աշխատանքների ավարտից հետո Մ-2-ից Լծեն հնարավոր կլինի հասնել Նորավանով:

- Մեկ անգամ եւս նշենք, որ մեծամասշտաբ ճանապարհաշինական ծրագրեր են իրականացվում Սյունիքում, որը, խոստովանենք, լավ օրից չէ, թեեւ ճանապարհ կառուցելը բոլոր դեպքերում իրադարձություն է: Հետաքրքիր է՝ մեր ունեցած ճանապարհաշինական հզորությունները բավարարո՞ւմ են ըստ պատշաճի եւ սահմանված ժամկետներում կյանքի կոչելու այդ ծրագրերը:

- Ճանապարհաշինական ռեսուրսներն ընդհանուր առմամբ բավարարում են առկա աշխատանքներն իրականացնելու համար: Ճանապարհաշինության ոլորտում կատարվող աշխատանքների ծավալների մեծացումը նպաստում է նաև բնագավառում գործող կազմակերպությունների հզորությունների մեծացմանը, նոր կազմակերպությունների ձևավորմանը:

Եզրափակիչ մաս

- Ֆինանսական ոլորտին առնչվող մի հարց եւս. երբ 2021-ի աշնանը մեր առջեւ վերջնականապես սրությամբ ծառացավ այլընտրանքային ճանապարհների կառուցման խնդիրը, Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստակամություն հայտնեց աջակցել Հայաստանին՝ այլընտրանքային ճանապարհների կառուցման գործում:

Արդյո՞ք Իրանի պատրաստակամությունը պատշաճ ըմբռնումի արժանացավ մեզանում եւ գործնական դրսևորումներ ունեցավ:

- Այդ հարցի պատասխանին նույնպես չենք տիրապետում, քանզի մեր գործառույթների մեջ չի մտնում:

- Եվ վերջին հարցը՝ արդյո՞ք վերջնականապես ուրվագծված կարելի է համարել Հյուսիս-հարավի սյունիքյան երթուղին:

Եթե ավարտված են նախագծային աշխատանքները, ապա ին՝ չ հիմնական ցուցանիշներ կունենա ապագա մայրուղին:

Եվ, եթե որոշակիացված է այդ ամենը, ե՞րբ կարող են մեկնարկել շինարարական աշխատանքները:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի Արտաշատ-Սիսիան հատվածում նախատեսվում է կառուցել 2-րդ տեխնիկական կարգի շուրջ 175կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված, այդ թվում՝ 14կմ ընդհանուր երկարությամբ կամուրջներ և 4 կմ ընդհանուր երկարությամբ թունելներ: Այս հատվածի համար նախապատրաստվել է նախնական նախագիծ:

Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագիրը հաստատվել է 24.09.2021թ. ՀՀ կառավարության թիվ 1564-Ա որոշմամբ: Մանրամասն աշխատանքային նախագիծը պատրաստ է: Նախատեսվում է կառուցել 2-րդ տեխնիկական կարգի նոր ճանապարհահատված՝ մոտ 60 կմ ընդհանուր երկարությամբ, ներառյալ 4.7կմ ընդհանուր երկարությամբ 27 կամուրջ և 12.5կմ ընդհանուր երկարությամբ 9 թունել (ամենաերկարը Բարգուշատի թունելն է՝ մոտ 8,6կմ երկարությամբ): Մանրամասն աշխատանքային նախագիծն անցել է հատուկ համալիր փորձաքննություն, որի ամփոփ եզրակացությունը հավանություն է ստացել 2020 թվականի մայիսի 27-ին ՀՀ կառավարության թիվ 870-Ա որոշմամբ:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ հատվածում նախատեսվում է կառուցել շուրջ 32կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված (Ագարակ-Վարդանիձոր-Քաջարան նախատեսվող թունելի մուտք): Քաջարան-Ագարակ հատվածի մանրամասն նախագծման համար 2018 թվականին հայտարարվել է միջազգային մրցույթ: 2021 թվականին նախագծման աշխատանքներն ավարտվել են: 2021 թվականին ավարտվել են նաև Քաջարան-Ագարակ ճանապարհային հատվածի մաս կազմող Քաջարանի թունելի նախագծման աշխատանքները: Ըստ նախագծի՝ նախատեսվում է կառուցել շուրջ 7.2կմ ընդհանուր երկարությամբ Քաջարանի թունել և շուրջ 3կմ թունելի մոտեցումները:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/dzmary-syuniqyan-chanaparhnerin-irokhutyunner-khndirner-e%D6%82-iharke-karutsvokh-aylyntranqayin-chanaparhner>

11.02.2022

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՄԵՆԱՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԲԱՆԱՁԵՎ

ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Մենատն ընդունել է Հայաստանի Սյունիքի մարզի հետ քույր-նահանգ/մարզ համագործակցություն հաստատելու մասին բանաձև:

«Արմենայքես»-ի հաղորդմամբ՝ այս մասին տեղեկացնում է ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը: Բանաձևով Կալիֆորնիան համերաշխություն է հայտնում Հայաստանի հարավային մարզին՝ Սյունիքին:

Այն կնպաստի երկու վարչական միավորների կրթական, տնտեսական և մշակութային փոխշահավետ համագործակցությանը: Նշվում է, որ Հայաստանն ու Միացյալ Նահանգները կապված են պատմական, ժողովրդավարության, ազատության և բարգավաճման ընդհանուր արժեքներով, և այս բանաձևի ընդունումը վերահաստատում է այդ փաստը: ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի արևմտյան շրջանի ղեկավար Նորա Հովսեփյանը ողջունել ու բարձր է գնահատել բանաձևը հեղինակած, Կալիֆորնիայի Ասամբլեայի անդամ Քրիս Հոլդենի ջանքերը փաստաթղթի ընդունման ուղղությամբ:

«Այսպիսի ձգնաժամային պահին, երբ Աղբյուրի և Թուրքիայի կողմից եկող լուրջ սպառնալիքների համատեքստում Սյունիքի ինքնիշխանությունը մեծ վտանգի տակ է, Կալիֆորնիայի նահանգի այս համարձակ քայլը համերաշխության դրսևորում է, որն իր հերթին կամրապնդի Հայաստանի ժողովրդի վճռականությունը՝ ամուր կանգնելու տարածաշրջանում աղբյուրի անվտանգության և թուրքական ագրեսիվ դերակատարներից եկող շարունակական սպառնալիքների դեմ», -ասել է Նորա Հովսեփյանը:

Կալիֆոռնիա նահանգի Ասամբլեայի ներկայացուցիչ Քրիս Հոլդենը նշել է, որ Սյունիք մարզի հետ հարաբերությունների ամրապնդումն արվում է այն ժամանակ, երբ տարածաշրջանային ուժերը՝ Ադրբեջանը և Թուրքիան, վտանգ են ներկայացնում մարզի գոյությանն ու կենսապահովմանը:

«Այս բանաձևը վերահաստատում է Կալիֆոռնիայի համերաշխությունը Հայաստանի և մեր 1 միլիոնանոց ուժեղ հայ համայնքի հետ: Այսօր մենք երկարատև կապեր ենք ստեղծում ավելի լավ վաղվա օրվա համար», - նշել է նա:

Քրիս Հոլդենի հեղինակած Կալիֆոռնիայի նահանգի և Սյունիքի մարզի միջև քույր-նահանգ/մարզ համագործակցություն հաստատելու վերաբերյալ բանաձևը 2021թ. սեպտեմբերի 2-ին հաստատվել էր Կալիֆոռնիայի Ասամբլեայում:

Աղբյուրը՝

<https://armenpress.am/arm/news/1075292.html?fbclid=IwAR1yOQFAqJltaaHwiJXvqSaMY91VAJ6UjHFdkvUWzpldpWoYdkPeXWW94Mc>

14.02.2022

ԿԱՐՄԻՐ ԿՏՈՒՐՆԵՐՈՎ ՔԱՂԱՔԸ. ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է ԳՈՐԻՍԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Գորիսի ճարտարապետությանը բնորոշ շենքեր՝ կարմիր կտուրներով ու փայտե բազրիքով. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը վերականգնում է Գորիսի կենտրոնական մասի պատմամշակութային միջավայրը:

Արթուր Սողոմոնյան (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն) - Այս պահի դրությամբ զբոսաշրջային ենթակառուցվածքների առումով երկու բաղադրիչ արդեն իսկ ավարտվել են Գորիսում, և դրանք արդեն իսկ նկատելի են: Մեկը Վարարակն գետի հունի մաքրումն էր և աջակողմյան հատվածի բարեկարգումը և Գորիսի կենտրոնական մասի պատմական միջավայրի, տների ֆասադների և տանիքների փոխարինումն էր, որով վերականգնվել էր հին Գորիսի պատկերը:

Ծրագիրն իրականացվում է մի քանի փուլով. հին Գորիսի միջավայրի վերականգնումը մեկնարկել է 2020-ի ապրիլին՝ Կառավարության և Համաշխարհային բանկի միջոցներով:

Գազիկ Գրիգորյան (շինարարության որակի տեխնիկական հսկիչ) - Երկրորդ փուլի շրջանակներում նախատեսված է ամբողջությամբ վերակառուցել պատմամշակութային կենտրոնի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը: Աշխատանքներն արդեն սկսված են 2021-ի մայիսից: Այս պահին Գորիսում կառուցվել է մոտ 10 կմ ջրագիծ: Դրանք մագիստրալ ջրագծեր են:

Տուրիստական ենթակառուցվածքների բարելավման երրորդ բաղադրիչը կապված է ջրահեռացման ու ջրամատակարարման համակարգերի վերականգնման հետ: Ընթացքի մեջ է 800 մ փողոցի բարեկարգումը, արտաքին լուսավորության ապահովումը, հետիոտն և հեծանվային երթուղու ձևավորումը:

Արթուր Սողոմոնյան - Այն ենթադրում է, որ այդ հատվածում՝ կենտրոնական մասում, պետք է բարեկարգվեն ճանապարհները, մայրերը, լուսավորությունը: Ուղղակի սպասում ենք, որ ջրահեռացման համակարգն ամբողջությամբ կառուցվի:

Տեղ-տեղ փողոցներն ու մայրերը սալապատված կլինեն՝ ինչպես հին Գորիսում: Քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցումն իրականացվում է գերմանական «Կա-Էֆ-Դաբլու» բանկի միջոցներով:

Գագիկ Գրիգորյան - Գորիս քաղաքի կենտրոնական մասի ջրագծերը կառուցվել են 70-ականներին, դրանք ֆիզիկապես մաշվել են, բավական շատ հատվածներում ունենք ջրի կորուստներ: Դրանցից խուսափելու, հետագայում՝ վերականգնվող հատվածի որակական հատկանիշները պահպանելու համար անհրաժեշտություն է առաջացել ամբողջ կոմունիկացիաները փոխարինել:

Ծրագիրը ներառում է հանրապետության 6 մարզերը: Ընդհանուր առմամբ նախատեսված է 11 քաղաքի և 41 գյուղական բնակավայրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում ու վերակառուցում:

Գագիկ Գրիգորյան - Տեղադրվում են ժամանակակից պոլիէթիլենային խողովակներ, որոնց և՛ պահպանման ժամկետներն են երկար՝ մինչև 100 տարի, և՛ սանիտարահիգիենիկ տեսակետից ավելի նպատակահարմար են:

Այս ծրագրերով կարմիր կտուրներով քաղաքում կատարված ներդրումն ընդհանուր առմամբ 1 մլն 270 հազար դոլար է կազմում: Գորիսից հետո նույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է սկսել նաև Մեղրիի «Հին թաղ» կոչվող հատվածի վերականգնման աշխատանքները: Սա կնպաստի, որ Գորիս եկող զբոսաշրջիկի երթուղին անցնի Մեղրիով:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3tuCAXg>

07.02.2022

ՍՅՈՒՆԵՑԻ ՏՂԱՆԵՐՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՈՍԿԵ և ԲՐՈՆՁԵ ՄԵԴԱԼՆԵՐ ԵՆ ԲԵՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

Գորիսի մանկապատանեկան ըմբշամարտի մարզադպրոցի սաների թիվը վերջին օրերին կրկնապատկվել է: Պատանիների ոգևորության առիթը հաղթանակած ըմբիշներ Արտակ Աղաբեկյանն ու Ալենն Միրզոյանն են, որոնք Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլ քաղաքում տեղի ունեցած ըմբշամարտի մանկապատանեկան մրցաշարում զբաղեցրել են առաջին և 3-րդ տեղը: Հայաստան են բերել գավաթ, ոսկե և բրոնզե մեդալներ:

Տիգրան Աղաբեկյան, Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն - Մրցաշարից անմիջապես հետո երեխաների թիվը, կարելի է, ասել բազմապատկվեց: Իսկապես, Ձեր այցով էլ երեխաները շատ ոգևորվեցին: Սյունիքի մարզում պետք է խթանենք սպորտը, հատկապես՝ ըմբշամարտը, քանի որ ըմբշամարտի ոգին և դաստիարակությունն այլ կերպ է ազդեցություն գործում երեխաների ռազմահայրենասիրության վրա:

Ըմբշամարտի ֆեդերացիայի աջակցությամբ՝ Հայաստանից մասնակցել է երկու խումբ՝ 2 մարզիչ և 4 մարզիկ: Ներկայացրել են Սյունիքի մարզը և Երևանը: 200-ից ավելի ըմբիշների մասնակցությամբ մանկապատանեկան մրցաշարի 35 կգ քաշային կարգում հաղթանակը Սյունիք բերած Արտակն ասում է՝ ուրախությունը կիսել է հայրիկի հետ, որը նաև իր մարզիչն է:

Մարզիկներին շնորհավորելու էին եկել մարզպետ Մելիքսեթ Պողոսյանն ու փոխմարզպետ Կարո Ավանեսյանը: Մարզպետը կարևորում է միջազգային նմանօրինակ մրցաշարերին մասնակցելը, ասում է՝ միշտ պատրաստ է աջացել, որպեսզի Սյունիքում զարգանա սպորտը:

Ըմբշամարտի ֆեդերացիան և Սյունիքի մարզպետարանը համատեղ ջանքերով մտադիր են ընդլայնել համայնքային ըմբշամարտի խմբակները: Շուտով ըմբշամարտի մարզումներ կիրականացվեն նաև Տաթև համայնքում:

Աղբյուրը՝ <https://bit.ly/35qbSHe>

03.02.2022

ԿԱՊԱՆԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ՆՈՐԱԿՈՉԻԿԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ. ԹՍԳՈՒՉԻ ԹՈՎՄԱՍՅԱՆՆ ԱՀԱԶԱՆԳՈՒՄ Է

Ահազանգ եմ ստացել, որ Կապանի զորամասերից մեկում հրամանատարական կազմը նսեմացրել և բռնության է ենթարկել նորակոչիկին՝ ստիպելով մաքրել սանհանգույցը, ինչի

արդյունքում էլ նորակոչիկը փախուստի է դիմել: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր, ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Անմիջապես հանձնարարել եմ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի փորձագտներին կապ հաստատել թե՛ Պաշտպանության նախարարության, թե՛ զինվորի հարազատների հետ:

Նորակոչիկի հարազատները նշել են, որ վերջինս բանակ է գորակոչվել հունվարի 31-ին, փետրվարի 1-ի առավոտյան նրան և ևս երկու զինվորի ստիպել են մաքրություն իրականացնել, իրենք հրաժարվել են, որի արդյունքում ծեծել են, թույլ չեն տվել ճաշարանից օգտվել, քնել, ջուր խմել և այլն: Ջինվորը կապ է հաստատել հարազատների հետ, պատմել հանգամանքները, որից հետո զինվորի հետ կապը կորել է. վերջինս փախուստի է դիմել, իսկ ծեծի մասին ահազանգել է 2-րդ զինվորը: Հարազատները պատմել են նաև, որ ՊՆ-ն և տվյալ գորամասի հրամանատարական կազմը ներողություն են խնդրել իրենցից, ընդունել են, որ տարածքում մաքրություն անելու պարտադրանք եղել է, իրենց խոսքով, մեկ անգամ խփել են զինվորին, բայց սանհանգույցի մաքրության մասին խոսք չի գնացել:

Կապ ենք հաստատել նաև ՊՆ Մարդու իրավունքների բարեվարքության վարչության պետի հետ, ով հայտնել է, որ տեղյակ է խնդրից, խոսել է Կապանի ռազմական ոստիկանության աշխատակիցների հետ. զինվորին միայն հորդորել են մաքրել իրեն հատկացված տարածքը, այլ պարտադրանք և ծեծ չի եղել: Դեպքի առթիվ ծառայողական քննություն է ընթանում: Իսկ զինվորի գտնվելու վայրը հայտնի չէ:

Մեր փորձագետները գրուցել են նաև Կապանի գորամասի հրամանատարի հետ, ով պատմել է, որ զինվորը բոլորի ներկայությամբ հայտարարել է, որ ինքը չի պատրաստվում մաքրություն իրականացնել, որից հետո հրամանատարը հրավիրել է զինվորներին իր աշխատասենյակ, բացատրական աշխատանքներ է իրականացրել, զինվորների ներկայությամբ հրամանատարն անձամբ մաքրել է իր սենյակը՝ ցույց տալու համար, որ դա յուրաքանչյուրի պարտականությունն է, և պարսավելի ոչինչ չկա, որի արդյունքում էլ նորակոչիկները վստահեցրել են, թե նման խնդիր այլևս չի լինի, սակայն աշխատասենյակը լքելուց հետո, երբ վաշտի հրամանատարը նրանց հորդորել է իրենց հատկացված տարածքը մաքրել, նրանք հրաժարվել են, և վերոնշյալ զինվորը լքել է գորամասը:

Լսելով բոլոր կողմերի բացատրությունները, պետք է արձանագրել, որ նման դեպքերը բանակում անթույլատրելի են և պետք է իսպառ վերացվեն: Համաձայն Հայաստանի Հանրապետության Ձինված Ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքի 1-3 հոդվածների պահանջների՝ գորամասում զինծառայողների ամենօրյա կյանքն ու գործունեությունն իրականացվում է ներքին ծառայության պահանջներին համապատասխան: Ձինվորական ծառայության կատարման սկզբում զինծառայողը կարիք ունի հատուկ ուշադրության: Հրամանատարների (պետերի) խիստ վերահսկողությունը և նրանց անձնական օրինակը օգնում են զինծառայողին արագորեն ընկալելու ներքին ծառայության կանոնները: Համաձայն Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների՝ ՀՀ զինված ուժերի զինծառայողը ծառայության ժամանակ ղեկավարվում է օրենքների, զինվորական կանոնադրությունների պահանջներով և հրամանատարների հրամաններով: Ի թիվս այլնի՝ զինծառայողը պարտավոր է՝ բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, նրանց օգնել խոսքով ու գործով, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, նրանց հեռու պահել անարժան արարքներից:

Ինչ վերաբերվում է գորամասում զինվորների կողմից մաքրության ապահովմանը, գտնում եմ, որ այդ աշխատանքների կատարումը պետք է կազմակերպվի Օրենքի դրույթներին խիստ

համապատասխան՝ հարգելով յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված), ինչպես նաև խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը սահմանող Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթները:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/kapani-zoramaserits-mekum-norakochikin-brnutyan-en-entarkel-taguhi-tovmasyann-ahazangum-e>

Կազմող՝ Ս. Ալավերդյան